

ԿԱՐԾԻՔ

ՆԱԸՆ ԿԱՅԾԵՐԻ ՀԱԿՈՒՅԱԼԻ “ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԽՈՍՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԴԻՄԿՈՒՐՍՈՒՄ” ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրախոսման ներկայացված ատենախոսությունը նվիրված է գիտական ոճում, մասնավորապես՝ դասախոսությունների և գիտական հոդվածների ժանրերում որոշ լեզվական միավորների խոսքարկման, այն է՝ կապահաստատական գործառության դրսևորումներին: Որո՞նք են այդ լեզվական միավորները: Սույն ատենախոսության ուսումնասիրության օբյեկտ է վերոնշյալ ժանրերում կիրարկող հարցերը և ժամանակակից անգլերենում լայն կիրառում գտած որոշ հարցական ձևերը, մասնավորապես՝ OK, Alright և Right խոսույթային նշիչները: Վերջիններս, ինչպես գիտենք, լայն տարածում ունեն առօրյա-խոսակցական ոճում, սակայն, ինչպես փաստում են սույն հետազոտության տվյալները, հաճախ կիրառվում են դասախոսություններում՝ դրանով իսկ ձեռք բերելով նոր գործաբանական իմույթներ և կատարելով բազմապիսի գործառույթներ, ինչն էլ ապահովում է աշխատանքի գիտական նորույթը: Վերջին տասնամյակներում գիտական դիսկուրսը բազմաթիվ հետազոտությունների ուսումնասիրության առարկա է դարձել, քանի որ գիտական դիսկուրսին հատուկ են ուրույն կառուցվածքային առանձնահատկությունները և գործաբանական դրսևորումները: Այս առումով սույն աշխատանքը արդիական է, քանի որ նյութի վերլուծությունը կատարված է գործաբանական իմաստների հարացույցի լույսի ներքո:

Կառուցվածքային առումով, աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքի վերջում ներկայացված են հավելվածներ, որոնք համապատասխան տեղեկատվություն են պարունակում օգտագործված նյութերի վերաբերյալ:

Աշխատանքի առաջին գլուխը՝ “Խոսքարկման և տեղեկատվական գործառույթների քննության տեսական հիմքերը գիտական դիսկուրսում” եռապլան քննություն է լեզվի գործառույթների տեսությունների, գիտական դիսկուրսի երկու հիմնական ժանրերի, մասնավորապես՝ դասախոսությունների և գիտական հոդվածների, ինչպես նաև դրանցում կիրառվող հարցերի դասակարգման վերաբերյալ: Համապատասխանաբար տրոհված լինելով երեք ենթագլխի՝ աշխատանքի առաջին ենթագլխում քննարկվում են տարբեր լեզվաբանների, մասնավորապես՝ Կ. Բուլերի, Մ. Հելիդեյի, Բ. Յակոբսոնի, Բ. Մալինովսկու, Ջ. Լեյվերի և այլոց կողմից առաջարկված տեսությունները և մոտեցումները լեզվի հիմնական գործառույթների, մասնավորապես խոսքարկային գործառույթի վերաբերյալ: Հարկ է նշել, որ

ատենախոսը կարողանում է համադրել և համեմատել տարբեր գիտնականների մոտեցումները, նշելով թե՛ զուգամետ, թե՛ տարամետ կարծիքները, ինչի մասին վկայում են աշխատանքում գետեղված տեսական դրույթները: Նշելի է նաև, որ ատենախոսը հղում է կատարում վերոնշյալ և այլ գիտնականների կարծիքներին նաև երրորդ գլխում, դրանով իսկ փորձելով զուգահեռներ անցկացնել իր և այլ գիտնականների կողմից առաջարկված հարցերի գործառույթների միջև: Երկրորդ ենթագլխում անդրադարձ է կատարվում դասախոսության և գիտական հոդվածի՝ որպես գիտական դիսկուրսի, հիմնական ժանրերի կառուցվածքային առանձնահատկություններին՝ հիմք ընդունելով գլխավորապես Մ. Մոնտգոմերիի առաջարկած գիտական դիսկուրսի կառուցվածքային մոդելը, որը նաև հենք է սույն ատենախոսության վերլուծական հատվածի համար: Գլուխը եզրափակվում է դասախոսություններում և գիտական հոդվածներում կիրառվող հարցերի հիմնական գործառույթների և դրանց դասակարգման մասին ակնարկով, որի վերաբերյալ գետեղված աղբյուրները դարձյալ վկայում են ատենախոսի տեսական պատշաճ պատրաստվածության մասին:

Աշխատանքի երկրորդ գլխում ատենախոսը անդրադառնում է իր հետազոտական աշխատանքի մեթոդաբանական հայեցակերպին: Մանրակրկիտ լուսաբանվում է հետազոտության սխեման, տվյալների հավաքագրման և հաշվարկման գործիքակազմի ընտրությունը, ինչպես այն տեսությունները, որոնց լույսի ներքո կատարվել է վերլուծությունը: Աշխատանքի այս հատվածում առանձին անդրադարձ է կատարվում գիտական դիսկուրսում, մասնավորապես՝ դասախոսություններում և գիտական հոդվածներում կիրառվող հարցերի տեսակներին, դրանց ներհակ հատկանիշներին, գործաբանական ներուժին և հարալեզվաբանական առանձնահատկություններին, ինչպես նաև դրանց հաճախականությանը: Քննության են առնվում և ներկայացվում հարցական նախադասությունների գործառույթները: Հիմք ընդունելով Լ. Յանգի, Ջ.Սինքլեյերի և Բ.Քոլհարթի մոտեցումները, ատենախոսը առաջարկում է իր կողմից կազմված կարգաբաշխությունը, հաշվի առնելով հարցերի կիրառության թե՛ արտալեզվական, թե՛ հարալեզվական գործոնները, մասնավորապես, դադարի առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև պատասխան ստանալու ակնկալիքը և դրա բացակայությունը: Այդ հարցերի տեսակները քանակական հաշվումներով և իրենց բնորոշ գործառույթներով ամփոփ կերպով ներկայացված են համապատասխան աղյուսակներում և դիագրամաններում, ինչը, անշուշտ, տեսական արժեք է հաղորդում ամբողջ հետազոտությանը:

Աշխատանքի երրորդ՝ «Խոսքարկումն ու տեղեկատվականությունը գիտական խոսքում» վերնագրով գլուխը գալիս է իրականացնելու հետազոտության գլխավոր խնդիրներից մեկը, այն է՝ պարզել հարցական նախադասությունների գործածության հաճախականությունը, ինչպես նաև դրանց գործառույթները երկրորդական և գլխավոր դիսկուրսում: Ատենախոսը փաստական ծավալուն նյութի հիման վրա նկարագրում է խոսքարկային արտահայտությունները, այն է՝ Right, Alright, OK արտահայտությունները, մեկնաբանում է դրանց խոսքարկային գործառույթային դրսևորումները, ինչպիսիք են՝ նախորդող մտքի ճշմարտացիության հաստատումը, ներգրավվածության ստեղծումը, ուշադրության կենտրոնացումը, հաղորդակցական հավասարության ապահովումը: Այնուհետև, ատենախոսը համադրում է խոսքարքային արտահայտությունները ոչ խոսքարկային արտահայտությունների, մասնավորապես՝ հատուկ հարցերի հետ և եզրակացնում, որ վերջիններս կարող են կատարել գրեթե նույն գործառույթները, ինչ խոսքարկային արտահայտությունները: Վերջին հանգամանքը հիմք է տալիս ատենախոսին եզրահանգել, որ «հատուկ հարցերը նաև խոսքարկային արտահայտություններն են տվյալ ժանրում» (էջ 91): Ատենախոսի մյուս ճիշտ եզրահանգումն այն է, որ թե՛ հատուկ հարցերը, թե՛ ընդհանուր հարցերը գիտական հոդվածներում կատարում են նույն գործառույթները, ինչ դասախոսություններում, ինչը դարձյալ մոտեցնում է գիտական հոդվածներում կիրառվող հարցերը խոսքարկային արտահայտություններին:

Եզրակացության բաժնում ատենախոսը ամփոփում է իր հետազոտության արդյունքները:

Գնահատելով այն դրականը, որ անկասկած ունի իր մեջ սույն ատենախոսությունը, ցանկանում ենք կանգ առնել որոշ թերությունների և վիճարկելի դրույթների վրա:

1. Առաջին դիտողությունը վերաբերում է ատենախոսության հենց վերնագրի բառային ձևակերպմանը, մասնավորապես՝ “correlation” բառի ընտրությանը: Չե՞ որ հարաբերակցության կամ փոխհարաբերակցության դեպքում երկու լեզվական կատեգորիաները հավասարապես ակտիվ փոխազդեցության մեջ են իրար նկատմամբ և մեկի փոփոխությունը ենթադրում է մյուսի փոփոխությունը: Աշխատանքում նկարագրված տեղեկատվական գործառույթը “պասիվ” վիճակում է, մինչդեռ խոսքարկային գործառույթը, ինչպես հետևականորեն նկարագրվում է ատենախոսության մեջ, դրսևորվում է տեղեկատվության զուտ մատուցման որակի առումով: Կցանկանայինք պարզաբանում ստանալ այս հարցի վերաբերյալ:
2. Աշխատանքում երբեմն հանդիպում ենք օրինակների ոչ ճշգրիտ մեկնաբանությունների: Այսպես, միևնույն համաշարադրանքում վերլուծելով երկակի

կիրառված OK? հարցական ձևի գործառույթները, ատենախոսը վերագրում է վերջինիս բոլորովին տարբեր գործառույթներ, մասնավորապես՝ մտքի ընկալումը մի դեպքում և մտքի կարևորությունը, ճշմարտացիությունը, ներգրավվածության ստեղծումը, ինչպես նաև գերիշխող չինչելը՝ մյուս (էջ 76): Ատենախոսը սակայն չի հիմնավորում այդ բազմաթիվ գործաբանական դրսևորումները և ինչպես են դրանք նշմարվում երկրորդ կիրառության դեպքում: Մեկ այլ օրինակում, վերլուծելով OK? հարցական ձևի կիրառությունը, ատենախոսը վերագրում է վերջինիս վերահաստատման (restatement) գործառույթ, այն ինչ, մեր կարծիքով, հարցի միջոցով դասախոսը ակնկալում է արձագանք, մասնավորապես՝ համաձայնեցում լսարանի կողմից կամ պարզապես ստուգում է ունկնդիրների ընկալումը տվյալ թեմայի շուրջ (էջ 93): Խիստ վիճարկելի է նաև ատենախոսի այն հետևությունը, թե ամբողջ թեմանեմային շղթա կազմող հատուկ հարցին հաջորդող պատասխանը հանդես է գալիս որպես թեմա (էջ 100), մինչդեռ պատասխանը, այն էլ արտահայտված գեղջված անդամով նախադասությամբ, կարող է կատարել միմիայն ռեմայի հաղորդակցական գործառույթ:

3. Աշխատանքում երբեմն հանդիպում ենք թերի ձևակերպումների, ինչպիսիք են, օրինակ՝ “... it is attempted to put those objectives together and call them *linguistically lecture- and article-specific elements*” (էջ 31), “What is done in the current research is to claim that when being used in that phrase...” (էջ 51), “More contexts about the functions of special questions are also introduced” (էջ 88):
4. Աշխատանքը, կարծում ենք, կշահեր, եթե հարցական նախադասությունների տեսակները, դրանց գործառույթները և հաճախականությունը ուսումնասիրվեր նաև սոցիոլեզվաբանական համատեքստում, մասնավորապես՝ լեզվագենդերային տարբերությունների լույսի ներքո: Կարծում ենք, որ գենդերային տարամետումները կարող են տարբեր կերպ անդրադառնալ հարցերի ընտրության, ինչպես նաև դրանց հաճախականության վրա:

Նշված թերությունները չեն նսեմացնում ատենախոսության արժեքը և գիտականությունը: Սույն հետազոտությունը ընդլայնում է գիտական դիսկուրսի և առհասարակ դիսկուրսի ուսումնասիրության շրջանակները նոր և արժեքավոր տվյալներով և մոտեցումներով՝ կատարված վերլուծության արդյունքում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության մեջ ներկայացրած տեսակետներին և եզրակացություններին, իսկ ատենախոսության հիմնական

դրույթները համապատասխանաբար արտացոլված են հրապարակումներում: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ Նարե Կայծերի Հակոբյանը արժանի է իր հայցած քանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանին և միջնորդում ենք Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար Լեզուներ» մասնագիտական խորհրդին նրան շնորհելու այդ աստիճանը:

Գրախոս՝ Վ. Բրյուսովի անվան պետական

համալսարանի լեզվաբանության և հաղորդակցման

տեսության ամբիոնի դոցենտ, Բ.Գ.Թ.

Հաստատում եմ դոցենտ Կ. Վեյանի ստորագրությունը:

Վ. Բրյուսովի պետական համալսարանի գիտքարտուղար

Կ.Ա. Վեյան



15.06.2022